ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԱՄ-ԳՀԱՇՁԲ-22/26-1

ք. Աշտարակ «18» Հոկտեմբեր 2022 թ.

«ՀՀ Արագածոտնի մարզպետարան»-ը, ի դեմս գլխավոր քարտուղար **Հ.Գևորգյան** -ի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և **<<Հրշեջ Շահ-Ար>> ՍՊԸ-ն /<<Նեմրութ>> ՍՊԸ-ի համատեղ/**, ի դեմս տնօրեն Համիկ Ավագյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **<<Ապարանի Վ.Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մարզադահլիճի և դասասենյակների և <<ԱՊԱՐԱՆԻ Հ. ՈՍԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **ֆինանսական միջոցների հատկացումից հետո 75 օրացուցային օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 [illegible]

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը

«Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 36418800 (երեսունվեց միլիոն չորս հարյուր տասնութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, որից 6069800 (վեց միլիոն վաթսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 18778800 (տասնութ միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որից 3129800 (երեք միլիոն հարյուր քսանինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

3-րդ չափաբաժին 17640000 (տասնյոթ միլիոն վեց հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ որից 2940000 (երկու միլիոն ինը հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25--ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է **6 /վեց/** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Արագածոտնի մարզպետարան **Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ,** **Վ.Պետրոսյան 4** **ՀՎՀՀ՝ 05004247** **Հ/Հ 900441041176** **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն** **ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Հ.Գևորգյան** ---------- /ստորագրություն/ Կ.Տ	**«Հրշեջ Շահ-Ար» ՍՊԸ** **Հասցե՝ ք. Երևան, Սարի-Թաղ 17փ.9տ.** **ՀՎՀՀ – 00930103** **Հ/հ- 2475900747270000** **«Արդշինբանկ» Էջմիածին մ/ճ** **Տնօրեն՝ Համիկ Ավագյան** ---------- /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված թիվ 1
« 18 » Հոկտեմբերի 2022 թ. կնքված
ՀՀԱՄ-ԳՀԱՇՁԲ-22/26-1ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ՁԱՓԱԲԱԺԻՆ 1

ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի Վ. Եղիազարյանի անվան թիվ 1 դպրոց ՊՈԱԿ-ի մարզադահլիճի և դասասենյակների վերանորոգման աշխատանքներ

	ԾԱՎԱԼԱԹԵՐԹ ՆԱԽԱՀԱՇԻՎ					
ՀՀ	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չ/Մ	Քանակը	միավորի գին հազ.դր	Ընդհանուրը (հազ. դրամ) 5x6	Կշիռը
1	3	4	5	6	7	8
1	**Քանդման աշխատանքներ/Մարզադահլիճ/**					
2	Հատակի ռեզինե բլոկների քանդում	մ^2	272	80	21760	
3	Կ/ս հատակների քանդում	մ^2	33	200	6600	
4	Պատերի կերամիկական սալերի քանդում	մ^2	20	200	4000	
5	Դռների և պատուհանների ապամոնտաժում	մ^2	69.36	100	6936	
6	Շրիշակների քանդում	գմ	100	40	4000	
7	Պատերի ներկի մաքրում	մ^2	500	80	40000	
8	Առաստաղի ներկի մաքրում	մ^2	295	100	29500	
9	Շեպերի գաջե սվաղի քանդում	մ^2	30	150	4500	
10	Գաջի սվաղի ծրատում, մասնակի քանդում /պատերի/	մ^2	450.0	120	54000	
11	Գաջե սվաղի մասնակի քանդում	մ^2	100.0	100	10000	
12	Առաստաղի գաջի մաքրում	մ^2	295	120	35400	
13	Շին աղբի և ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում 5կմ հեռավորության վրա/Փայտը վերադարձվում է դպրոցին/	տն	30	2650	79500	
14	**Նորոգման աշխատանքներ**					
15	Պատերի գաջե սվաղ բարձր որակի	մ^2	100.0	1850	185000	
16	Պատերի գաջե սվաղ քսահարթում	մ^2	450	1900	855000	
17	Առաստաղի գաջե սվաղ քսահարթում	մ^2	295.0	1900	560500	
18	Պատերի ներկում յուղաներկ ներկով /ներառյալ ջրակայուն մածիկը/	մ^2	275.0	350	96250	
19	Պատերի ներկում լատեքսային ներկով /ներառյալ ջրակայուն մածիկը/	մ^2	275.0	300	82500	
20	Ներսի Պատերի ց/ա սվաղ բարձր որակի/ներառյալ ցանցը/	մ^2	80	3000	240000	
21	Առաստաղի ներկում լատեքսային ներկով	մ^2	295.0	250	73750	
22	Փայտամած (Строительные леса,харачо)	ժամ	40	1200	48000	
23	Պատերի լրացում 20սմ և 10սմ հաստությամբ պեմզաբլոկներով	մ^3	11	29000	319000	
24	Ամրան □12AIII	տ	0.191	409000	78119	
25	Ամրան □6AI	տ	0.163	395000	64385	
26	Շեպերի գաջե սվաղի իրականացում ներառյալ ցինկապատ ուղղորդիչը	մ^2	30	2400	72000	
27	**Դռների, պատուհանների տեղադրում**					
28	Մետաղապլաստե դռների տեղադրում Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., հայկական պրոֆիլ	մ^2	6	46000	276000	
29	Մետաղապլաստե պատուհան, բլոկով, սպիտակ, 60մմ					

30	Մետաղապլաստե պատուհան, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), բացվող	$մ^2$	17	39500	671500	
31	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում	գմ	19	1500	28500	
32	Ընդամենը՝				4846700	30.97%
33	<u>Հատակներ</u>					
34	Բետոնյա միաձույլ ծածկի սալի պատրաստում B15 դասի բետոնից 8սմ/ներառյալ պողպատե, ամրանային, եռակցված ցանցը, BP d=3,0մմ, բջիջը 200x200մմ/	$մ^3$	22	64000	1408000	
35	Հատակի g/ա սվաղ հարթեցնող շերտ 4սմ	$մ^2$	310	3000	930000	
36	Ինքնահարթեցվող հատակ հարթեցնող շերտ 4մմ	$մ^2$	273	3500	955500	
37	Պլաստիկ շրիշակների իրականացում 10սմ լայնքով	$մ^2$	15	350	5250	
38	Հատակներ/սպորտային/ վինիլ 4.5մմ	$մ^2$	273	14000	3822000	
39	Խաղադահլիճի հատակի ներկում/բասկետ. հատակի ձևավորումով/	$մ^2$	273	1500	409500	
40	Պրեսգրանիտե հատակների պատրաստում	$մ^2$	28	6000	168000	
41	Էլ.լուսավորություն					
42	Կոթառների, ապամոնտաժում	հատ	10	50	500	
43	Անջատիչների և վարդակների ապամոնտաժում	հատ	10	90	900	
44	Ակոսների պատրաստում հաղորդալարերի համար	գմ	250	250	62500	
45	Ակոսների փակում գաջե սվաղով	$մ^2$	20	1850	37000	
46	Լուսավորության վահանակ 6 խմբային ավտոմատների համար/հարկային/	հատ	1	2500	2500	
47	Ավտոմատ անջատիչ միաֆազ 25Ա	հատ	1	1250	1250	
48	Ավտոմատ անջատիչ միաֆազ 32Ա	հատ	2	1100	2200	
49	Ավտոմատ անջատիչ միաֆազ 50Ա	հատ	1	1300	1300	
50	40Վտ LED լուսատու /հարվածապաշտպան/ 4000K	հատ	18	12000	216000	
51	18Վտ LED լուսատու,4000K	հատ	4	5500	22000	
52	Հաղորդալար ППВ փակ էլ.հաղորդման գծերի համար , 2x2,5մմ2	մ	300	250	75000	
53	Հաղորդալար ППВ փակ էլ.հաղորդման գծերի համար , 3x2,5մմ2	մ	70	500	35000	
54	Հաղորդալար ППВ փակ էլ.հաղորդման գծերի համար , 4x6մմ2	մ	40	1400	56000	
55	Անջատիչ երկսեղմակ	հատ	3	850	2550	
56	Վարդակ փակ էլ. հաղորդման գծերի համար 16Ա հողանցման հպակով	հատ	6	850	5100	
57	Տուփեր էլ.մոնտաժային	հատ	5	50	250	
58	Ամրակ մալուխների ամրացման համար	հատ	140	15	2100	
59	<u>Քանդման աշխատանքներ /դասասենյակներ/</u>					
60	մանրահատակի քանդում	$մ^2$	119	150	17850	
61	Պատերի և առաստաղի գաջի մաքրում,ծրատում	$մ^2$	354	120	42480	
62	Գաջի սվաղի մասնակի քանդում /պատերի և առաստաղի /	$մ^2$	80.0	100	8000	
63	Դռների քանդում	$մ^2$	7.2	100	720	
64	Պատերի ներկի մաքրում	$մ^2$	235	80	18800	
65	Հատակի g/ա շերտի քանդում	$մ^2$	119	1200	142800	
66	Շեպերի գաջե սվաղի քանդում	$մ^2$	15	150	2250	
67	Առաստաղի ներկի մաքրում	$մ^2$	119	100	11900	
68	Շին աղբի և ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում 5կմ հեռավորության վրա/Փայտը վերադարձվում է դպրոցին/	տն	10	2650	26500	
69	<u>Նորոգման աշխատանքներ</u>					
70	Պատերի գաջե սվաղ պարզ որակի					

72	Պատերի ներկում լատեքսային ներկով /ներառյալ ջրակայուն մածիկը/	մ^2	120.0	300	36000	
73	Պատերի ներկում յուղաներկ ներկով /ներառյալ ջրակայուն մածիկը/	մ^2	120.0	350	42000	
74	Շեպերի գաջե սվաղի իրականացում ներառյալ ցինկապատ ուղղորդիչը	մ^2	15	2400	36000	
75	Հատակներ					
76	Հատակի ց/ա սվաղ հարթեցնող շերտ 4սմ	մ^2	119	3000	357000	
77	Լամինատե հատակի իրականացում 12մմ հաստ ներառյալ շրիշակը և սպունգը	մ^2	119	4500	535500	
78	Առաստաղ					
79	Առաստաղի գաջե սվաղ	մ^2	20	1850	37000	
80	Առաստաղիի գաջե սվաղ քսահարթում	մ^2	100	1900	190000	
81	Առաստաղի ներկում լատեքսաներկով	մ^2	119.00	250	29750	
82	Դռների, պատուհանների տեղադրում					
83	Մետաղապլաստե դուռ, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ	մ^2	7.2	46000	331200	
84	Էլ.լուսավորություն					
85	Կոթառների, ապամոնտաժում	հատ	10	20	200	
86	Անջատիչների և վարդակների ապամոնտաժում	հատ	10	50	500	
87	Ակոսների պատրաստում հաղորդալարերի համար	մ	150	150	22500	
88	Ակոսների փակում գաջե սվաղով	մ^2	15	900	13500	
89	Ավտոմատ անջատիչ միաֆազ 25Ա	հատ	1	1250	1250	
90	22վտ LED լուսատու 4000k	հատ	12	7600	91200	
91	Հաղորդալար ՊՊՎ փակ էլ.հաղորդման գծերի համար , 2x2,5մմ2	մ	150	550	82500	
92	Հաղորդալար ՊՎ փակ էլ.հաղորդման գծերի համար, 3x2,5մմ2	մ	80	600	48000	
93	Անջատիչ երկսեղմակ	հատ	3	700	2100	
94	Վարդակ փակ էլ. հաղորդման գծերի համար 16Ա հողանցման հպակով	հատ	8	1250	10000	
95	Տուփեր էլ.մոնտաժային	հատ	10	100	1000	
96	Ամրակ մալուխների ամրացման համար	հատ	60	15	900	
	Ընդամենը՝				10802300	69.03%
	Արժեք				15649000	
	ԱԱՀ	20%			3129800	
	ԸՆԴԱՄԵՆԸ				18778800	100.00%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզպետարան
Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ,
Վ.Պետրոսյան 4
ՀՎՀՀ՝ 05004247
Հ/Հ 900441041176
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Հ.Գևորգյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Հրշեջ Շահ-Ար» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Սարի-Թաղ 17փ.9տ.
ՀՎՀՀ – 00930103
Հ/հ- 2475900747270000
«Արդշինբանկ» Էջմիածին մ/ճ
Տնօրեն՝ Համիկ Ավագյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 2
« 18 » Հոկտեմբերի 2022 թ. կնքված
ՀՀԱՄ-ԳՀԱՇՁԲ-22/26-1ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ՉԱՓԱԲԱԺԻՆ 2

ՀՀ Արագածոտնի մարզի <<ԱՊԱՐԱՆԻ Հ.ՈՍԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքներ

	ԾԱՎԱԼԱԹԵՐԹ ՆԱԽԱՀԱՇԻՎ					
<<	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չ/Մ	Քանակը	միավորի գին հազ.դր	Ընդհանուրը (հազ. դրամ) 5x6	Կշիռը
1	3	4	5	6	7	8
1	**Քանդման աշխատանքներ**					
2	Փայտյա հատակի քանդում	մ^2	320	300	96000	
3	Շրիշակների քանդում	գմ	76	200	15200	
4	Գ/ու և պատուհանների քանդում	մ^2	5	200	1000	
5	Պատերի ներկի մաքրում	մ^2	608	200	121600	
6	Առաստաղի ներկի մաքրում	մ^2	340	200	68000	
7	Շեպերի գաջե սվաղի քանդում	մ^2	25	200	5000	
8	Գաջի սվաղի ծրատում, մասնակի քանդում /պատերի/	մ^2	450.0	200	90000	
9	Գաջե սվաղի մասնակի քանդում	մ^2	158.0	200	31600	
10	Առաստաղի գաջի մաքրում,ծրատում	մ^2	380	200	76000	
11	Շին աղբի և ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում 13կմ հեռավորության վրա/Փայտը վերադարձվում է դպրոցին/	տն	30	2850	85500	
12	**Նորոգման աշխատանքներ**					
13	Պատերի գաջե սվաղ բարձր որակի	մ^2	160.0	1950	312000	
14	Պատերի գաջե սվաղ քսահարթում	մ^2	450	2000	900000	
15	Առաստաղի գաջե սվաղ քսահարթում	մ^2	380.0	2000	760000	95.91%
16	Պատերի ներկում յուղաներկ ներկով /ներառյալ ջրակայուն մածիկը/	մ^2	305.0	2100	640500	
17	Պատերի և առաստաղի ներկում լատեքսային ներկով	մ^2	305.0	1600	488000	
18	Ներսի Պատերի g/ա սվաղ բարձր որակի ներառյալ ցանցը	մ^2	100	3000	300000	
19	Փայտամած (Строительные леса,харачо)	ժամ	86	1200	103200	
20	Պատերի լրացում 10սմ և 20 հաստությամբ պեմզաբլոկներով	մ^3	2	29000	58000	
21	Ամրան □8AI	տ	0.097	450000	43650	
22	Ամրան □12A500C	տ	0.220	395000	86900	
23	Շեպերի գաջե սվաղ	մ^2	25	2500	62500	
24	Պատերի նկարազարդում	հատ	1	[illegible]	[illegible]	

26	Բետոնե շերտի իրականացում հատակների B12.5 դասի բետոնից 6սմ	մ^3	19.2	45000	864000	
27	Հատակի ց/ա սվաղ հարթեցնող շերտ 4սմ	մ^2	320	3500	1120000	
28	Ինքնահարթեցվող հատակ հարթեցնող շերտ 10մմ	մ^2	320	2800	896000	
29	Պլաստիկ շրիշակների իրականացում 10սմ լայնքով	մ^2	20	400	8000	
30	Հատակներ սպորտային վինիլից/4շերտով/ 4.5մմ	մ^2	330	15400	5082000	
31	Խաղադահլիճի հատակի ներկում/բասկետ. հատակի ծևավորումով/	մ^2	320	2000	640000	
32	Հատակի ց/ա սվաղ հարթեցնող շերտ 40մմ հաստությամբ	մ^2	50	3000	150000	
33	Հատակներ պ/գ	մ^2	50	8000	400000	
34	**<u>Դռների, պատուհանների տեղադրում</u>**					
35	Մետաղապլաստե դռների տեղադրում Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., հայկական պրոֆիլ	մ^2	4.8	46000	220800	
36	Մետաղապլաստե պատուհան, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, բացվող	մ^2	5.00	46000	230000	
37	Սպոտային ցանց պատուհանների պաշտպանության համար/հաստությունը 5մմ,չափ 40*40մմ/	մ^2	100	1200	120000	
38	Օդափոխության ճաղավանդակ	հատ	3.00	600	1800	
39	**Ընդամենը՝**				14098250	
40	**էլ.լուսավորություն**					
41	Կոթառների, ապամոնտաժում	հատ	7	50	350	
42	Անջատիչների և վարդակների ապամոնտաժում	հատ	7	90	630	
43	Ակոսների պատրաստում հաղորդալարերի համար	գմ	300	250	75000	
44	Ակոսների փակում գաջե սվաղով	մ^2	20	900	18000	
45	Լուսավորության վահանակ 6 խմբային ավտոմատների համար/հարկային/	հատ	1	8000	8000	
46	Ավտոմատ անջատիչ միաֆազ 25Ա	հատ	2	1250	2500	
47	40Վ,S LED լուսատու4000K/պաշտպանիչ ցանցով/	հատ	30	13000	390000	
48	18Վ,SLED լուսատու 4000K	հատ	6	6000	36000	
49	Հաղորդալար ՊՊԲ փակ էլ.հաղորդման գծերի համար , 2x2,5մմ2	մ	400	550	220000	4.09%
50	Հաղորդալար ՊՊԲ փակ էլ.հաղորդման գծերի համար , 3x2,5մմ2	մ	120	600	72000	
51	Հաղորդալար ՊՊԲ փակ էլ.հաղորդման գծերի համար , 3x4մմ2	մ	80	870	69600	
52	Անջատիչ երկսեղմակ	հատ	3	630	1890	
53	Վարդակ փակ էլ. հաղորդման գծերի համար 16Ա հողանցման հպակով	հատ	6	1250	7500	
54	Տուփեր էլ.մոնտաժային	հատ	5	130	650	
55	Ամրակ մալուխների ամրացման համար	հատ	60	10	600	
56	**Ջեռուցման համակարգ**					
57	Ռեգիստրների ապամոնտաժում	հատ	10	800	8000	
58	Խողովակների ապամոնտաժում մինչև n110	մ	40	700	[illegible]	

60	Խողովակների ապամոնտաժում մինչև n32	մ	40	500	20000	
61	Խողովակների ապամոնտաժում մինչև n20	մ	48	350	16800	
62	Պողպատե ռեգիստրների պատրաստում և տեղադրում/ներառյալ նյութը/L=1.5մ	հատ	10	7100	71000	
63	Ամրան 12AIII	տ	0.05	445000	22250	
64	Ռեգիստրի ամրացում պատին լրակազմ	հատ	10	600	6000	
65	Φ76x4մմ պողպատե խողովակի մոնտաժ	գմ	10	3750	37500	
66	Φ76x4մմ ձևավոր մասերի մոնտաժում	մ	4.0	12000	48000	
67	Φ57x3.5մմ տրամագծով խողովակի մոնտաժ	գմ	40.0	3100	124000	
68	Φ57 ձևավոր մասերի մոնտաժում	հատ	6.0	500	3000	
69	Dy=40x2,5մմ տրամագծով խողովակի մոնտաժ	գմ	50.0	2500	125000	
70	Φ40 ձևավոր մասերի մոնտաժում	հատ	6.0	300	1800	
71	Φ25 տրամագծով խողովակի մոնտաժ	գմ	10.0	1500	15000	
72	Φ25 տրամագծով խողովակի մոնտաժ	գմ	10.0	1500	15000	
73	Մարտկոցի վերին կարգավորիչ փական Φ20/մարտկոցի/	հատ	10	1500	15000	
74	Մարտկոցի ներքին կարգավորիչ փական Φ20/մարտկոցի/	հատ	10	1500	15000	
75	Օդահան փականի տեղադրում	հատ	10	550	5500	
76	Դատարկման ծորակի տեղադրում Φ20մմ	հատ	1	2100	2100	
77	Ընդամենը՝				601750	
	ԸՆԴԱՄԵՆԸ				14700000.0	
	ԱԱՀ	20.0%			2940000	
	ԸՆԴԱՄԵՆԸ				17640000	100.00%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզպետարան
Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ,
Վ.Պետրոսյան 4
ՀՎՀՀ՝ 05004247
Հ/Հ 900441041176
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Հ.Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Հրշեջ Շահ-Ար» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Սարի-Թաղ 17փ.9տ.
ՀՎՀՀ – 00930103
Հ/հ- 2475900747270000
«Արդշինբանկ» Էջմիածին մ/ճ
Տնօրեն՝ Համիկ Ավագյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 3
« 18 » Հոկտեմբերի 2022 թ. կնքված
ՀՀԱՄ-ԳՀԱՇՁԲ-22/26-1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	<<Ապարանի Վ.Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մարզադահլիճի և դասասենյակների վերանորոգման աշխատանքներ	***Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը***	75 օրացուցային օր
3	<<ԱՊԱՐԱՆԻ Հ. ՈՍԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքներ		75 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզպետարան
Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ,
Վ.Պետրոսյան 4
ՀՎՀՀ՝ 05004247
Հ/Հ 900441041176
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Հ.Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Հրշեջ Շահ-Ար» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Սարի-Թաղ 17փ.9տ.
ՀՎՀՀ – 00930103
Հ/հ- 2475900747270000
«Արդշինբանկ» Էջմիածին մ/ճ
Տնօրեն՝ Համիկ Ավագյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 4
« 18 » Հոկտեմբերի 2022 թ. կնքված
ՀՀԱՄ-ԳՀԱՇՁԲ-22/26-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611100/501	<<Ապարանի Վ.Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մարզադահլիճի և դասասենյակների վերանորոգման աշխատանքներ	%	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
3	45611100/503	<<ԱՊԱՐԱՆԻ Հ. ՈՍԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերանորոգման աշխատանքներ	%	... %	... %	... %	... %	... %	.. %	... %	... %	... %	... %	... %	... %

**** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:***

***** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ համաձայնագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզպետարան
Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ,
Վ.Պետրոսյան 4
ՀՎՀՀ՝ 05004247
Հ/Հ 900441041176
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Հ.Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Հրշեջ Շահ-Ար» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Սարի-Թաղ 17փ.9տ.
ՀՎՀՀ – 00930103
Հ/հ- 2475900747270000
«Արդշինբանկ» Էջմիածին մ/ճ
Տնօրեն՝ Համիկ Ավագյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 5
« » Հոկտեմբերի 2022 թ. կնքված
ՀՀԱՄ-ԳՀԱՇՁԲ-22/26-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 5.1
« » Հոկտեմբերի 2022 թ. կնքված
ՀՀԱՄ-ԳՀԱՇՁԲ-22/26-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն